



ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ...

Շատ կանայք ունեն այնպիսի երազանքներ, ինչպիսին ունես Դու

Մարիա

Մարիան ապրում է աղքատության մեջ: Իր աշխատանքի դիմաց նա ստանում էր շատ ցածր աշխատավարձ: Դրանով նա քիչ թե շատ կարողանում էր պահել իր ընտանիքը: Սակայն նա չէր կորցնում հավատը դեպի լավ ապագան: Նա պայմանագիր կնքեց մի գործակալության հետ, որը նրան առաջարկեց լավ աշխատանք Արևմտյան Եվրոպայում՝ բարձր աշխատավարձով: Նա կարծում էր, թե զբաղվելով ազգային պարերով՝ կփրկվի աղքատությունից: Հոլանդիա հասնելուց անմիջապես հետո նրա բոլոր երազանքները փշրվեցին: Խոստացած աշխատանքի փոխարեն նրան ստիպեցին աշխատել սեքս- ակումբում

Թերեզա

Թերեզան գրանցվեց նամակագրության ակումբում: Նա հույս ուներ հարուստ փեսացու գտնել: Նրա ընկերը, որի հետ նամակագրական կապ ուներ, հրավիրեց նրան Գերմանիա: Բայց այնտեղ նրան սպասվում էր խորին հիասթափություն: Պարզվեց, որ նրա ապագա ամուսինը, որ ոչ միայն իրենից բավականին մեծ էր տարիքով, այլ նաև հարբեցող էր: Նա դաժանորեն էր վարվում Թերեզայի հետ

Լիտա

Բեյգիացի զբոսաշրջիկը Լիտային խոստացել էր քարտուղարուհու աշխատանք իր հյուրանոցում: Սակայն, հենց որ Լիտան հասավ Բեյգիա, նա իլեց աղջկա անձնագիրը: Հետո ստիպեց նրան զբաղվել մարմնավաճառությամբ



Անսահմանափակ կանայք կարող են քեզ պատմել նմանատիպ պատմություններ



ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ԱՅՍ ԶԳՈՒՇԱՅՈՒՄԸ...

Արևմտյան Եվրոպայի բելոր երկրներում մենք ծանոթանցանք մեծ թվով կանանց և աղջիկների հետ, որոնք դժբախտության մեջ էին:

Նրանց խոստացել էին.

- լավ աշխատանք
- բարձր աշխատավարձ
- երջանիկ ամուսնություն
- և այլն

Նրանք հավատացել էին, որ արագ կարող են հարստանալ, հետո վերադառնալ հայրենիք, որպեսզի օգնեն իրենց աղքատ հարազատներին:

ԻՄԿ ԻՐԱԿԱՆՈՒՄ...

1. Բարձր գործազրկության պատճառով Արևմտյան Եվրոպայում դժվար է աշխատանք գտնել
 2. Պահանջվում է աշխատանքի թույլտվություն, բնակության թույլտվություն կամ վիզա: Այլապես քեզ կարող են վտարել երկրից
 3. Շատ կանանց թերի են վարձատրում: Եվ նրանք հաճախ ստիպված զբաղվում են մարմնավաճառությամբ
 4. Գեղեցիկ խոստումները հաճախ կեղծ են լինում և չեն կատարվում
- Զգույշ եղեք

ՄՏՈՒԳԻՐ, ԱՐԴՅՈ՞Ք ՔՈ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԱՐԳԻՆ ԵՆ



ԲԱՅՑ ԵԹԵ ԱՅՆՈՒԱՍԵՆԱՅՆԻՎ ՈՐՈՇԵՄ...

1. Համոզվիր, որ գիտես այն մարդկանց ազգանուններն ու հասցեները, ովքեր քեզ առաջարկ են անում: Ստուգիր նրանց օրինակությունը

2. Դիմիր այն երկրի դեսպանություն, ուր պատրաստվում ես մեկնել: Իմացրի, իրական է արդյոք քեզ աշխատանք տվող անձը, կարելի է այդոք նրան վստահել

3. Դիմիր քո երկրում գործող այն խմբերին և կազմակերպություններին, որոնք աշխատում են վտարանդիների հետ: Փորձիր հավաքել որքան հնարավոր է շատ տեղեկություններ: Հնարավոր է, որ տուն վերադառնալուց հետո Դու զգաս նրանց օգնության կարիքը

4. Հայտնիր ազգականներիդ և բարեկամներիդ մեկնելու օրը, նոր հասցեդ, այն մարդկանց ազգանունները, ում հետ մեկնում ես և նրանց մտոթող նոր լուսանկար

ՔՈ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՔԵԶ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ

Եթե անախորժություններ ունենաս, իրավաբան պահանջիր: Դու ունես այդ իրավունքը

Եթե քեզանից խլել են Քո անձնագիրը, դիմիր ոստիկանություն: Արևմտյան Եվրոպայում, ոստիկանությունը նույնպես պայքարում է կանաց առևտրի դեմ

ԵՐԲԵՔ ՄԻ՝ ՏՈՒՐ ՔՈ ԱՆՁՆԱԳԻՐԸ



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՈՒՄ ԿԱՆԱՆՑ

Սույն բրոշյուրը Ձեզ համար կազմել է
Հոլանդիայի “Եկեղեցու Ծառայողներն
Ընդդեմ Կանանց Առևտրի”
հասարակական կազմակերպությունը

Բրոշյուրը նախատեսված է զարգացող
երկրների, Արևմտյան Եվրոպայի և ԱՊՀ
երկրների կանանց համար

Հայաստանում բրոշյուրը տարածում է
“Ղևոնդ Ալիշան” լուսավորչական-
մշակութային ընկերությունը

The following leaflet was established by
Dutch Foundation of the Religious against
Trafficking in Women

The leaflet is designed for women of
developing countries, East Europe, CIS

In Armenia the leaflet is spreaded by
“Ghevond Alishan” Cultural Educational
Association



ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ԴՐԱ՞ԽՏ Է...

ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ ԱՅԴ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՆ



Ինչ- որ մեկը քեզ խոստացել է
ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՊԱԳԱ
ԱՐԵՎՍՈՒՏՔՈ՞ՒՄ